ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N- 2/2-1-2208 «10» 09 2014թ.

Ձեր 21.08.2014թ. թիվ 2621/1445 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ Հասմիկ Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ ՀՀ ոստիկանությունում քննարկվել է դիտորդների խմբի կողմից ներկայացված ՀՀ ոստիկանության պետի 14.01.2005թ. թիվ 1-Ն հրամանում (այսուհետ հրաման) փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ առաջարկությունները, որոնց կապակցությամբ տրվում են ներքոշարադրյալ մեկնաբանությունները.

1. Հրամանի 9-րդ կետի <<ե>> ենթակետն ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ առաջարկությունը չի ընդունվում, քանի որ նշված փաստաբանը կարող է հանդիսանալ ՁՊՎ-ներում պահվող անձանց պաշտպանը կամ շահագրգռված անձ որևէ քրեական գործով, ինչի արդյունքում կարող է ցուցաբերվել կողմնակալ մոտեցում: Ավելորդ չենք համարում ևս մեկ անգամ նշել, որ հրամանի 7-րդ կետի համաձայն, դիտորդների խմբում ընդգրկվելիս, ի թիվս այլ մասնագիտությունների, նախապատվությունը տրվում է նաև իրավաբանի մասնագիտություն ունեցող անձանց:

2. Հրամանի 12-րդ կետի վերաբերյալ արված առաջարկությունը չի ընդունվում, քանի որ ՁՊՎ-ում պահվող անձի անձնական գործն ու գրագրությունը պարունակում են օրենքով պաշտպանվող անհատական տվյալներ, որոնք կարող են խմբին հասանելի դառնալ բացառապես տվյալ անձի համաձայնությամբ: Բացի այդ, դա հակասում է ՀՀ Սահմանադրության 23-րդ և <<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածների պահանջներին:

3. Հրամանի 14-րդ կետում առաջարկվող փոփոխությունը կատարելու դեպքում անհրաժեշտ է Ձեր կողմից սահմանել <<հրատապ>> դեպքերը կամ այն հարցերի կոնկրետ շրջանակը, որոնց վերաբերյալ մեկնաբանությունները անհրաժեշտ կլինեն տալ առավել կարճ ժամկետում և տվյալ գրության մեջ պատճառաբանված նշել <<հրատապ>> լինելու հանգամանքը: Իսկ ինչ վերաբերվում է <<հրատապ>> խնդիրներին առավել արագ արձագանքելուն, ապա հրամանի 11-րդ և դիտորդների խմբի էթիկայի կանոնների 4.2 ու 4.4 կետերի համաձայն՝ դիտորդների խմբի կողմից ՁՊՎ վարչակազմի հետ գործուն համագործակցության

արդյունքում կարող են տեղում վերացվել կամ շտկվել <<հրատապ>> լուծում պահանջող խնդիրները:

Հարկ է նշել, որ ՀՀ ոստիկանության շտաբի պետի 10.01.2014թ. թիվ 2/2-1-19 գրությամբ դիտորդների խմբին առաջարկվել էր, որ հետևողական լինեն իրենց իսկ կողմից հաստատված էթիկայի կանոնների պահանջներին՝ թերությունների և խախտումների հայտնաբերման դեպքերում գործուն կերպով համագործակցեն ՁՊՎ-ների վարչակազմի հետ և վերջիններիս հնարավորություն ընձեռնեն դրանք տեղում շտկելու, քանի որ մինչ դիտորդների խմբի ընթացիկ հաշվետվությունները քննարկվում են ՀՀ ոստիկանության տարբեր ստորաբաժանումներում, հայտնաբերված թերությունները կամ խախտումները որոշակի ժամանակահատված մնում են չշտկված վիճակում և հրատապ լուծում չեն ստանում:

4. Դիտորդների խմբի կազմում փորձագետների ընդգրկման վերաբերյալ Ձեր կողմից առաջարկվող փոփոխությունը չի ընդունվում այն պատճառաբանությամբ, որ հրամանի 7-րդ կետը հնարավորություն է տալիս դիտորդների խումբը համալրել իրավաբանի, հոգեբանի, մանկավարժի և բժշկի մասնագիտություն ունեցող անձանցով ու խումբը վերոհիշյալ դրույթին համապատասխան ձևավորելիս՝ փորձագետների ներգրավման անհրաժեշտություն չի առաջանա, առավել ևս, որ հրամանի 4-րդ կետով նախատեսված է, որ խումբը կարող է համալրվել մինչև 21 անդամներով:

5. Հրամանի 20-րդ կետում կատարվող փոփոխությունը չի ընդունվում, քանի որ 19-րդ կետի 2-րդ պարբերությունը սահմանում է բոլոր որոշումների ընդունման կարգը, որտեղ որոշումների ընդունման համար անհրաժեշտ է խմբի անդամների ձայների կեսից ավելին, բացառությամբ որոշ դեպքերի, այդ թվում՝ էթիկայի կանոնների հաստատման համար, իսկ հրամանի 20-րդ կետի 2-րդ պարբերությունում էթիկայի կանոնների ընդունման համար սահմանվում է խմբի անդամների ձայների երկու երրորդի առկայությունը, որն ամենևին էլ կրկնություն չէ:

6. Հրամանի 22-րդ կետի վերաբերյալ արված առաջարկությունը նույնպես չի ընդունվում, քանի որ օրենսդրության խախտումները չեն կարող քննության առարկա դառնալ խմբի անդամների կողմից:

ՀՀ ոստիկանության շտաբ